Հայոն՝
այդ հսկան

BookMark

Charles Aznavour

Mon père, ce géant

BookMark

Շաոլ Ազնավուր

Հայրս՝ այդ իսկան

Թարգմանությունը ֆրանսերենից՝
Սամվել Գասպարյանի

ԵՐԵՎԱՆ
2021

BookMark

ՀՏԴ 821.133.1-32 Ազնավուր
ԳՄԴ 84(4Ֆր)-44
Ա 250

Ազնավուր Շառլ
Ա 250 Հայրս՝ այդ հսկան / Շ. Ազնավուր; Թարգմանությունը ֆրանսերենից՝ Ս. Գասպարյանի.- Եր.: Newmag, 2021.- 168 էջ:

Ազնավուրը ներկայանում է հումորի և երևակայության 16 զարդով, որոնք լեցուն են անակնկալներով, դրամայով ու երջանիկ լինելու խոհափիլիսոփայությամբ: 16 նովել և պատմվածք, որոնք տարիների ընթացքում գրել է մեծ շանսոնյեն և այժմ ներկայացնում է մեկ ժողովածուով:

ՀՏԴ 821.133.1-32 Ազնավուր
ԳՄԴ 84(4Ֆր)-44

ISBN 978-9939-884-26-4
Շառլ Ազնավուր «Հայրս՝ այդ հսկան» © Newmag, 2021
Charles Aznavour. Mon père, ce géant © Flammarion, 2007

Գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին:

ՆԱԽԱԳԾԻ
ԳԼԽԱՎՈՐ ՀՈՎԱՆԱՎՈՐ

Amundi ACBA
ASSET MANAGEMENT

Ձեր փորձառու գործընկերը

amundi-acba.am

BookMark

Բովանդակություն

Պապ լինելու արվեստը 9

Ծաղրածուն և երեխան 29

Լուսանկարների ալբոմը 39

Օրավարձուն, O sole mio 45

Հայրս՝ այդ հսկան 53

Իմ ԱՄԲ, անտեր շունը 59

Ոմն մեկը 69

Հանուն Ֆրանսիայի 73

Kleenex աստղը 79

BookMark

Ամանորի արտասովոր ընթրիք 87

Բուդուն՝ մարդուց առաջացած այդ կապիկը 95

Շատ մի՛ ատիր՝ սիրել կա 103

Միայնակ հայրը 121

Այդ գիշեր 131

Մեկ տեղ դրախտում 137

Արմեն Մեհմեդի պատմությունը 143

Կարդացեք նաև 165

BookMark

Ֆլամարիոն

Պապ լինելու արվեստը

Զգո՛ւյշ եղեք: Զգուշացե՛ք երեխաներից, որոնք իրենց հարցերով կարող են մոլորեցնել ու հիմար վիճակի մեջ գցել ձեզ: Վեց կամ յոթ տարեկան այդ չքնաղ էակներից յուրաքանչյուրը կարող է շատ հանգիստ հանկարծակիի բերել և հունից հանել ձեզ. դա ձեզ որպես պապ եմ ասում:

Այն պահին, երբ ես բոլորովին նման բան չէի սպասում, հազիվ աթոռի բոյի պստիկ-ճստիկը հանկարծ տնկվեց իմ դիմաց ու հայացքը մեխեց աչքերիս մեջ:

— Դե հիմա ինձ ասա, թե հորս խի չես սիրում:

Եվ ես, չգիտեմ որ մեղքիս համար, միանգամից հայտնվում եմ դատապարտյալի աթոռին: Հարցաքննությունը լավ բան չէր խոստանում: Անողոք, ինչպես արդարադատությունը, բռունցքներով կոնքերին կռթնած, իմ հոգեառը շատ հանգիստ սպասում էր պատասխանի: Տենդագին փնտրելով ու այդպես էլ չհիշելով ոչ մի փրկարար բառ՝ երկու անգամ թուքս կուլ տվեցի և քխկոցով կոկորդս մաքրեցի, իբր ուզում եմ շատ կարևոր բան ասել: Իրականում խելք ու միտքս ժամանակ ձգելն էր: Անհրաժեշտ էր արագ ուշքի գալ և հասկանալ, թե ինչպես

կարող եմ փակել այդ դեղնակտուց քննիչի բերանը: Որոշեցի նրա ուշադրությունը շեղել՝ հարցին պատասխանելով հարցով, և փորձեցի վստահություն հաղորդել ձայնիս, որը, սակայն, ողորմելի ձևով դողաց՝ հիշեցնելով այծի մկկոց: Մի խոսքով, հույս ունեի նրա ձեռքից պրծնել՝ խոսքը կտուրը գցելով:

— Իսկ քեզ ո՞վ է ասել այդ ամենամեծ հիմարությունը:

Դեռ չէի հասցրել գնահատել իմ նրբանուրբ խորամանկության թողած ազդեցությունը, երբ ռնգախոս փոքրիկի ծվծվոցը մի նոր հարված հասցրեց:

— Իմ հայրը ոչ մի անգամ հիմարություն չի ասում:

— Բա ո՞վ է ասել:

— Մաման:

Երկրորդ ապտակը քիթումռութիս: Ախր, ինձ տեղն է: Դա թող դաս լինի, որ սրանից հետո գիտունի տեղ չդնեմ ինձ: Այդ պահին ուղեղս հազարի վրա աշխատում էր: Եզրակացությունը մեկն էր՝ էբենոսագույն մարդը և նրա կինը՝ իմ դուստրը, ամենայն հավանականությամբ, խոսել էին երեխայի հետ: Միտքս տենդագին ելք էր փնտրում լռության մեջ, որը սպառնում էր երկար տևել պետական պաշտոնյայի պատուհանիկի մոտ տանջալի սպասումի պես: Մանչուկը շարունակում էր ուղիղ աչքերիս նայել: Պատրաստ էի գրազ գալ, որ ինչ-որ մեկը նենգաբար բարձրացրել էր կենտրոնական ջեռուցման ջերմաստիճանը: Փողկապս թուլացրի, արձակեցի վերնաշապիկիս օձիքի կոճակը: Այդ պահին ես նման էի ձկնավազանից դուրս նետված ձկան և մթնոլորտը լիցքաթափելու համար փորձեցի ծիծաղել, սակայն ծիծաղս ոչ միայն հիմարավուն ստացվեց, այլև հնչեց չափազանց կեղծ:

— Իսկ ինչ է ասել քեզ էն մյուսը՝ հայրդ:

— Ասել է, որ քեզ հետ ինձ խելոք պահեմ և լինեմ քաղաքավարի, որովհետև դու իմ պապիկն ես, ասել է՝ այնտեղ, Աֆրիկայում, իր գյուղում, բոլորը հարգում են պապիկներին: Բոլոր բարեկամներն ու հարևանները բարյացակամ են նրանց նկատմամբ, որովհետև նրանք հիշողություն են, հիմա լավ չեմ հիշում, թե ինչի, բայց հիշողություն են, որ նրանք շատ բարի են ու սիրալիր: Նրանք սիրո կարիք ունեն: Եվ շատ են սիրում պաչիկներ, իսկ դու պաչիկներ անել չես սիրում: Դու ինձ երբեք ծնկներիդ չես նստեցրել, ոչ էլ գրկել ես, երբեք չես խաղացել ինձ հետ: Երևի դու իմ իսկական պապիկը չես, հը՞:

Ինչը և անհրաժեշտ էր ապացուցել: Դե արի ու պատասխան տուր այս խոսքերին, որտեղ պարզ նշմարվում են մանկական միամտությունն ու անկեղծությունը: Ես քարացել-մնացել էի ճստիկ ու խառնածին հոգեառիս առջև, չգիտեի՝ ինձ ինչպես պահեմ: Ի՞նչ էր պետք անել այդ մեղադրական ճառից հետո՝ ինքս ինձ պաշտպանելու համար: Ակամա հայացք գցեցի ժամացույցիս: Ժամը չորսն անց կես էր: Դա իմ փրկությունն էր:

— Տե՛ս է՛, արդեն հետճաշիկի ժամն է: Ի՞նչ ես ասում, չգնա՞նք, Տրոկադերո հրապարակի հրուշակարանում տաք շոկոլադ խմենք:

Առաջարկս ընդունվեց լայն ժպիտով: Մանչուկը վազեց գլխարկի հետևից, հետո ձեռքիցս բռնած ինձ քարշ տվեց դեպի դուռը:

— Լա՛վ ես մտածել:

Ճանապարհին փոքրիկն ուրախ-ուրախ թռչկոտելով գալիս էր իմ կողքից, իսկ ես մտորում էի իմ չար բախտի մասին: Է՛, մի՞թե սա է պապ լինելու այդ չարչրկված արվեստը: Մի կերպ հաղթահարելով այն դժվարությունները, որոնք բաժին են

հասնում նոր ամուսնացածներին, այնուհետև երիտասարդ ծնողներին, հիմա ես պետք է սուսուփուս թույլ տամ, որ վաստակածս հանգստի խաղաղ տարիներն իր մտահոգիչ հարցերով ծաղրուծանակի ենթարկի այս մի մատ երեխան, այս մանչուկը, որը դարձել է իմ թոռը, ընդ որում, իմ կամքին հակառակ, որն իմ միս ու արյունն է, և ինքն է շարունակելու իմ ու իմ տոհմի անունը: Հա, լավ հիշեցի, որ տոհմի: Ի՞մ, թե՞ այն մյուսի: Եվրոպական՞ն, թե՞ աֆրիկյան: Ավելորդ եմ համարում ասել, որ այդ թոռ կոչվածը, որին, մեղա՛ քեզ Աստված, կարգին չեմ էլ ճանաչում և ի դեմս որի հազիվ եմ տեսնում մեր գաղղիացի նախնիների արժանի հետնորդին, որի թխավուն մաշկը բացարձակապես կապ չունի իմ մաշկի գույնի հետ (գուցե միայն ամառային արձակուրդի օրերին), ահա այդ թոռ կոչվածը բավականին հոգսեր է պատճառում ինձ: Միակ հույսս այն էր, որ շոկոլադն ու վիեննական քաղցրավենիքը երևի կկարողանային միացյալ ուժերով չեզոքացնել ինձ հարցախեղդ անելու նրա փափագը:

Բայց այդ պնդաճակատը հաստատ որոշել էր տրամադրությունս փչացնել: Մի կտոր կծելով կարագով կրուասանից, որը, չգիտես ինչու, թաթախել էր շոկոլադի թանձրուքի մեջ, թոռս վերսկսեց կիսատ թողած զրույցը:

— Ասում ես՝ հորս չես սիրում, որովհետև նա սևամո՞րթ է:

Այս անգամ համբերությանս բաժակը լցվեց, նույնիսկ սկսեց առատորեն թափվել կողքերից: Աչքի տակով շուրջս նայեցի. հո որևէ մեկը չլսե՞ց նրա խոսքերը: Նրան նշան արի՝ հասկացնելով, որ ցածր խոսի. պետք չէ խանգարել մյուս հաճախորդների հանգիստը: Հատկապես վախենում էի, որ մարդիկ հանկարծ կլսեին նրա ասածները: Մեզնից մի քանի

մետր հեռու նստած մի աժդահա աֆրիկացի վաղուց հետևում էր մեզ: Ա՛խ, ափսոս, որ աղջիկս՝ Մագալին, ամուսնացավ այդ Սթենլիի հետ, որի հետ ծանոթացել էր համալսարանում: Ի միջի այլոց, ես նրանց հարսանիքին չեմ մասնակցել: Ես, իհարկե, ցեղապաշտ չեմ, բայց երեք օրուգիշեր Աֆրիկայի կենտրոնում քեֆ-ուրախություն անելն իմ խելքի բանը չէ. սովորաբար ես քնում եմ երեկոյան ժամը տասին, իսկ թմբուկների դմփդմփոցից ուժեղ գլխացավեր եմ ունենում:

Հանկարծ, չգիտես որտեղից, մի մնջկատակ հայտնվեց, փողոցային մի արտիստ եկավ-ցցվեց ուղիղ մեր դիմաց և սկսեց իր ներկայացումը: Պետք է ասել, որ արվեստի այդ տեսակն իսկը ինձ փրկելու համար էր: Ես տասը եվրոյանոց մի թղթադրամ խոթեցի իմ փոքրիկ դատավորի ձեռքը, որի պռոշները կորել էին շոկոլադի մեջ, իսկ նա նույն վայրկյանին թղթադրամը հպարտ-հպարտ նվիրեց արտիստին: Տասը եվրոն մի մեծ կորուստ չէր շնորհակալ լինելու համար մի մարդու, որ հենց նոր ինձ օգնել էր դուրս գալ այդ հիմար վիճակից: Դրանից հետո միանգամից հաշիվը փակեցի, ու փոքրիկի հետ գնացինք իրենց տուն, որտեղ մայրը նրան էր սպասում: Աղջիկս այդ մի քանի ազատ ժամերն օգտագործել էր հետազոտվելու նպատակով բժշկին այցելելու համար: Այդպես է, որ կա, ուրեմն նա նորից հղի է, իսկույն մտածեցի ես: Չէ, նա իսկապես ոչ մի գրամ չի խղճում ինձ:

— Հը, լեզու գտա՞ք իրար հետ: Իրեն խելոք էր պահում, չէ՞: Հո չարություն չի՞ արել:

Ի՞նչ կարող էի ասել: Ինձ թվում էր՝ յուրաքանչյուր անզգույշ խոսք մի նոր փորձանք էր դառնալու գլխիս:

— Չէ՛, չէ՛, ի՞նչ ես ասում, ամեն ինչ լավ անցավ, գնացինք

տաք շոկոլադ ու կրուասաններ վայելեցինք,– ոչ այնքան վըստահ նետեցի ես:

— Հա, հրաշք էր,– ավելացրեց մանչուկը: Երևում է՝ նա իսկապես գոհ էր:

— Դե լավ, ես գնամ, ցտե...

Դուռը փակել չհասցրի: Մանչուկը, այսինքն՝ թոռնիկս, միանգամից նետվեց գիրկս, երկու ձեռքով փաթաթվեց վզիս և, «շնորհակալ եմ, պապի՛, հետաքաշիկը շատ համով էր», «ցտեսություն, պապի՛» բառերը հատ-հատ արտասանելով, սկսեց թաց ու զրնգուն համբույրներ դրոշմել այտերիս:

— Լա՛վ, լա՛վ, մի անգամ էլ կգնանք,– առանց մտածելու արտաբերեցի ես:

Դուռը շրխկոցով փակվեց, և ես մնացի մենակ, ինքս ինձ հետ, ապուշ վիճակում: Այս ի՞նչ է կատարվում ինձ հետ:

Մեքենայորեն միացրեցի հեռուստացույցը: Չադի փղերի մասին հաղորդում էր. բթացած վիճակում այնքան նստեցի հեռուստաէկրանի դիմաց, մինչև եկավ հարևանուհիս: Կնոջս մահից հետո Մարիվոնն ամեն երեկո գալիս է ինձ համար ընթրիք պատրաստելու: Ահա արդեն տասը տարի է (այն ժամանակ Մագալին դեռևս չէր հրապուրվել իր Սթենլիով), ինչ նա գալիս է ու գնում, ինչ-որ չափով փարատում է իմ մենակությունը:

— Ասեմ Ձեզ, որ բավականին ուշ եկաք: Վերջապես որոշեցիք մի անգամ ժամանակ տրամադրել Ձեր թոռնիկին: Գիտեք ինչ, Ձեր բախտը բերել է, նա դուրեկան երեխա է: Նաև լավ դաստիարակված է, ի տարբերություն մեր շենքի երեխաների:

Ես գլուխս տմբտմբացնում էի, իբրև համաձայնության նշան, և բնավ հակված չէի ժամերով խոսել այդ պապիկտատիկյան օրվա մասին:

Ընթրիքս արագ ավարտեցի և միանգամից պառկեցի քնելու՝ մոռանալով նույնիսկ դիտել այն հաղորդումը, որը երբեք բաց չէի թողնում: Սովորաբար գլուխս բարձին դնելուց հետո իսկույն քնում եմ: Այդ օրը քունս չէր տանում: Նույն հարցն այնքան ծանրութեթև արեցի, մինչև լույսը բացվեց: Ինչն է պատճառը, որ ես տանել չեմ կարողանում Սթենլիին: Ուրիշների կարծիքը: Դժվար արտասանվող նրա ազգանունը: Երկար-բարակ մտածելուց հետո հասկացա, որ ոչ մի հարցում չեմ կարողանում մեղադրել նրան, և հենց դա էլ հունից հանում էր ինձ. հետս միշտ խոսում է ընդգծված հարգանքով, ընդ որում, ընտիր ֆրանսերեն, բավականին լավ աշխատանք ունի, ընտանիքի օրինակելի հայր է, աղջկաս սիրում է, որդուն՝ պաշտում: Լավ, ասենք թե բողոքական է, բայց հո մեՆք չենք ընտրում մեր հավատը, երբ լույս աշխարհ ենք գալիս: Մանավանդ որ, կրոնական հարցերն ինձ ընդհանրապես չեն մտահոգում: Ուրեմն ո՞րն է խնդիրը:

Անցավ մի քանի օր: Հեռու թոռանս հարցերից, որոնք ափերից հանում էին ինձ, գիշերները նորից սկսեցի հանգիստ քնել, և կյանքն ընկավ իր սովորական հունի մեջ: Բայց դա երկար չտևեց: Մի օր Մագալին զանգեց ինձ ու հայտնեց, որ Հեմֆրին (դե արի ու հասկացիր, թե ինչպես կարելի է ֆրանսիացի երեխային կոչել ամերիկացի մի դերասանի ծիծաղելի անունով, եթե անգամ նրա խաղացած ֆիլմերը մարդկանց դուր են գալիս) կարոտել է իր պապին և շատ ուրախ կլինի կըրկին հանդիպել նրան:

— Շաբաթ կեսօրից հետո կարող եմ բերել քեզ մոտ,– առաջարկեց աղջիկս,– այդ օրը նա դասերից ազատ է, իսկ կիրակի, ժամը չորսի կողմերը, կգամ նրա հետևից: Նա կարող